ՊԱՏՄԱԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Doi: 10.56737/2953-7843-2023.02-67

ԱՇԽՈՒՆՋ ՊՈՂՈՍՅԱՆ
Պատմական գիտ. թեկնածու, ԿԳՄՄՆ

ՄԱՅՐ ԱԹՈՌԻ ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԻ ԳՈՐԳԵՐԻ ՀԱՎԱՔԱԾՈՒ (ՀԻՄՆԱԿԱՆ ՏԵՍԱԿՆԵՐՆ ՈՒ ԴՐԱՆՑ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՈՑ ԳՈՐԳԱԳՈՐԾԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ՀԱՄԱՐ)

Սկիզբը՝ թիվ Բ.

Դ. ԲՈՒՍԱԾԱՂԿԱՅԻՆ ԽՈՇՈՐ ՀՈՐԻՆՎԱԾՔՆԵՐՈՎ ԲՆՈՐՈՇՎՈՂ ԳՈՐԳԵՐ

Մայր Աթոռի հավաքածուում մեծ թիվ են կազմում բուսածաղկա-յին *հորինվածքներով բնորոշվող խմբին պատկանող գորգերը։ Դրանք առանձնացված են ըստ տեսակների, որոնց տարբերակման հարցում կարեւորված են հիմնական հորինվածքները՝ ծառանախշերը, բուսածաղ-կային վարդակներն ու կիսավարդակները, նշանախշերը, ծաղկանախ-շերը եւ այլն։ Այս խմբի կազմում եղած գորգերից պատմամշակութային առումով մեծ հետաքրքրություն է ներկայացնում մեր տիպաբանությամբ* Բարգուշատ *անվանակոչված գորգը, որը վերաբերում է ԺԹ. դ. առաջին կեսին։ Դա բնորոշվում է գեղազարդման բարդ համակարգով, որի կազ-մում բուսածաղկային խոշոր հորինվածքներ եւ բուսականացված խաչա-զարդեր են, իսկ գորգադաշտի ազատ տարածքներն էլ ամբողջությամբ ծածկված են որոշակի ծիսամոգական նշանակություն պարունակող տա-րատեսակ խորհրդանշաններով։ Անտարակույս, հենց այդ ամենով էլ այս տեսակին պատկանող գորգերն ունեն պատմամշակութային կարեւոր նշանակություն (պատկեր 11)։ Մեզ հայտնի տեղեկությունների համա-ձայն՝ հիմնականում գործել են Դիզակի, Բարգուշատի եւ ընդհանրապես Արցախի եւ Սյունիքի հարավային գավառների, ինչպես նաեւ Արաքս-պարի գորգագործական կենտրոններում։ Հայաստանի եւ արտերկրի*

թանգարաններում էլ այս տեսակը ներկայացված է ծայրահեղ սակավաթիվ նմուշներով եւ մասնագիտական շրջանակներին էլ, ըստ էության, անհայտ են դրա ծագումնաբանությունն ու տեղը կովկասյան գորգերի համակարգում: Մենք ենթադրում ենք, որ այս տեսակի գորգերի հիմնական հորինվածքները հայոց ավանդական գորգարվեստին բնորոշ հնամենի ավանդույթների արտահայտություններն են: Դրանցից առաջինը՝ բուսածաղկային խոշոր հորինվածքն ունի շեղանկյունաձեւ ուրվագիծ, կազմված է շեղանկյունաձեւ չորս զարդաշրջանակներից եւ դրանց կենտրոնում ներկայացված բազմաթերթ վարդակից: Հարուստ է նաեւ բուսածաղկային մանրակներից կազմված, խաչաձեւ առանցքով բարդ հորինվածքը, որը պատկերագրման, գեղազարդման մանրակների եւ իմաստային առումով ներդաշնակ է նախորդին: Այս երկու հորինվածքներն էլ ծիսամոգական հատկանիշներով օժտված հնամենի գորգին բնորոշ խորհրդանշաններ են եւ առնչվում են բնության զարթոնքի եւ կյանքի առաջացման հետ կապված հնամենի պատկերացումներին: Բացի գորգագաշտում ներկայացված հորինվածքներից՝ մեծ հետաքրքրություն է ներկայացնում նաեւ լայն գոտու գեղազարդման համակարգը, որում հիմնական տեղը զբաղեցնում են ձկնակերպ ոճավորումները: Մայր Աթոռում պահվող այս նմուշը թեեւ հատված է, բայց դրանով բոլորովին չի նվազում դրա սկզբնաղբյուրային նշանակությունը հայոց գորգարվեստի ընդհանուր նկարագրի մասին պատկերացում կազմելու համար:

Հավաքածուում բավականաչափ նմուշներ վերաբերում են Կենաց ծառ *տեսակին: Դրանք վերաբերում են գորգագործական տարբեր կենտրոնների՝ Սյունիքին, Վասպուրականի արեւելյան գավառներին, հարավարեւելյան Կովկասին, Լիլահան-Բուրվարին եւ այլն: Դրանք հիմնականում գծայնացված ծառանախշեր են, որոնք որոշ նմուշներում լրացված են նաեւ այլ մանրակներով՝ մասնավորապես մարդկային պատկերներով: Այս տեսակետից ուշագրավ է Պարսկաստանի հյուսիսարեւմտյան հայաշատ տարածաշրջաններում՝ Լիլահան-Բուրվար գավառների գորգագործական կենտրոններում ստեղծված այստեղ ներկայացված նմուշը (պատկեր 12): Գուներանգների ու գեղազարդման մանրակների ներդաշնակության առումով էլ կարեւորում ենք հարավարեւելյան Կովկասի գորգագործական ավանդույթներին բնորոշ, մեր կարծիքով՝ Շամախուց արեւմուտք գտնված մինչ 1980-ականների վերջը հայաբնակ եղած Կարամարյան գավառակի գորգագործական կենտրոններին վերաբերող*

գորգը (պատկեր 13)։ Հարավային Կովկասի գորգագործությանը քաջատեղյակ Մ. Իսաեւի դիտարկումների համաձայն՝ այդ կենտրոններում էին գործում նման չափսերի տեխնիկա-տեխնոլոգիական առումներով էլ բարձրակարգ գորգեր, որոնք շուկայում հայտնի էին որպես Էրմանի խիլա, այսինքն՝ Հայկական նախշ կամ Հայկական գորգ[1]։ Գեղազարդման մանրակների առումով աչքի են ընկնում այս գորգի եզրագոտիները, որոնք համահունչ են նաեւ արցախսյունիքյան գորգագործական արվեստի ավանդույթներին։

Այս խմբին պատկանող Ծաղկավոր տեսակին պատկանող գորգերի շարքում ուշագրավ է 1902 թվականին գործված նմուշը, որն ունի հայատառ թվակիր կարճ հիշատակարան[2]։ Այս տեսակի գորգեր գործել են բոլոր գորգագործական կենտրոններում, ուստի հայտնի են տասնյակ տարբերակների տեսքով։ Բայց այդքանով հանդերձ՝ դրանք առավել կատարյալ տեսքով գործվել են Լոռվա գորգագործական կենտրոններում, որին, մեր կարծիքով, վերաբերում է նաեւ այս նմուշը։

Խնդրո առարկա խմբի կազմում բավականին շատ են նաեւ բուսածաղկային վարդակներով գեղազարդվածները. նկատի ունենք մեր տիպաբանությամբ Ամարաս եւ Աղբակ տեսակներին պատկանող գորգերը։ Ամարաս տեսակի գորգերը բնորոշվում են մեծ չափսերով եւ ամբողջ գորգադաշտի երկայնքով պատկերված բազմաթերթ խոշոր վարդակներով, որոնք իրարից տարանջատված են ավելի փոքր նմանատիպ վարդակներով ու լայնակի ձգված բարդ հորինվածքներով (պատկեր 14)։ Ամարաս գորգերի գեղազարդման համակարգում կարեւորված են նաեւ թռչնապատկերները, որոնք ներկայացվում են գորգադաշտի եզրերին[3]։ Մայր Աթոռում այս տեսակի գորգերի մի մասը վերաբերում է ԺԸ. դարի երկրորդ կեսին եւ ԺԹ. սկզբներին։ Այս տեսակը բնորոշ էր հյուսիսարեւմտյան Պարսկաստանի, Վասպուրականի, Սյունիքի եւ Արցախի գորգագործական կենտրոններին։ Մայր Աթոռում պահվողները հիմնականում վերաբերում են Արցախի գորգագործական կենտրոններին եւ մասնավորապես Շուշիին։ Ավելացնենք, որ այս գորգերի գեղազարդման համակարգում առանձնակի նշանակություն ունի գորգադաշտի գեղազարդ-

---

[1] Տե՛ս М. Исаев, Ковровое производство Закавказья, Тифлис, 1932, էջ 123։

[2] Մայր Աթոռի Վեհարան, գ/հ 15։

[3] Տե՛ս, օրինակ, Գանձատանը պահվող՝ թիվ 12, 13, 15, Վեհարանում պահվող՝ թիվ 20 գորգերը եւ այլն։

ման համակարգը եզրափակող գորգադաշտի ծայրերում պատկերված թռչնակերպ զույգ ոճավորումներից կազմված հորինվածքը։

Գեղազարդման համակարգի բուսածաղկային մանրակներով հագեցածության տեսանկյունից առանձնահատուկ են վարդակներով ու կիսավարդակներով բնորոշվող գորգերը։ Այս տեսակետից Մայր Աթոռում պահվող նմանատիպ գորգերից այստեղ ներկայացնում ենք Գանձատանը պահվող թիվ 60 գորգը (պատկեր 15)։ Այն աչքի է ընկնում խոշոր չափսերով (830/280 սմ) եւ գուներանգների բազմազանությամբ ու ներդաշնակությամբ։ Այն կրում է հայոց գեղազարդման արվեստի ավանդույթների կնիքն ու, մեր կարծիքով, ստեղծվել է Խոյ-Սալմաստի գորգագործական կենտրոններում։ Ընդհանրապես, գորգերի գեղազարդման այս սկզբունքը Պարսկաստանում առանձնապես տարածում ստացավ Սեֆյան արքայատոհմի գերիշխանության դարաշրջանում, երբ Պարսկաստանի մի շարք խոշոր քաղաքներում՝ մասնավորապես Սպահանում, հիմնվեցին արքունիքին սպասարկող գորգագործական արհեստանոցներ, որոնցում նախկինում ձեւավորված ավանդույթների հիման վրա պալատական գորգանկարիչներն ստեղծեցին գորգերի նոր տարբերակներ, որոնցից մեկն էլ Աղբակ *տեսակն է։ Ներկայացվող նմուշում բազմաթերթ վարդակները, կիսավարդակներն ու* Շահ Աբաս *անունով տարբերակված բուսածաղկային հորինվածքները, համադրվելով մանր ծաղկանախշերի ու բուսանախշերի հետ, ստեղծել են յուրատեսակ դրախտային այգու տեսարան։*

Խնդրո առարկա խմբի կազմում առանձնահատուկ է Մշո որբանոցում 1908 թվականին գործված գորգը։ Այն ունի հայատառ թվակիր ընդարձակ հիշատակարան, որից պարզվում է, որ գործել են Պոլսո պատրիարք Մատթեոս սրբազանին նվիրելու համար՝«ՆՈՒԷՐ Կ. ՊՈԼՍՈՅ ՊԱՏՐԻԱՐՔ ԱՄԵՆ. Տ. ՄԱՏԹԷՈՍ Ս. ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ. ՄՇՈՅ ԻԳԱԿԱՆ ՈՐԲԱՆՈՅԷՆ»[4]*։*

Այս խումբը հավաքածուում ներկայացված է նաեւ նշանախշերով ու ծառանախշի տարբերակներով գեղազարդված տեսակներին պատկանող նմուշներով։

---

[4] *Մայր Աթոռի Հին Վեհարան, գ/հ 3։*

Ե. ԹԵՄԱՏԻԿ ՀՈՐԻՆՎԱԾՔՆԵՐՈՎ ԲՆՈՐՈՇՎՈՂ ԳՈՐԳԵՐ

Գորգերի հավաքածուում մեծ հետաքրքրություն են ներկայացնում թեմատիկ-պատկերային *գորգերը։ Դրանք առանձնահատուկ են այնքանով, որքանով աղերսվում են հանրույթի կենցաղին ու մշակույթին վերաբերող բոլոր ոլորտներին, եւ յուրաքանչյուրի դեպքում էլ ներկայացվող տեսարանները բնորոշվում են տվյալ ոլորտին վերաբերող մանրակների ներկայությամբ։ Դրանք առանձնահատուկ են նաեւ նրանով, որ յուրաքանչյուր նմուշ գործել են սահմանափակ նմուշներով՝ հատուկ պատվերների դեպքում, ու միայն որոշներն են, որ թեմատիկ առումով կրում են համահայկական բնույթ, եւ հայտնի են դրանց պատկանող հարյուրավոր նմուշներ։*

Այսպիսին են, օրինակ, Մայր Հայաստան *տեսակին պատկանող գորգերը։ Մայր Աթոռի հավաքածուներում կա այս տեսակին պատկանող երեք նմուշ։ Պատկերագրման թեմայի աղբյուրն այստեղ միեւնույնն է՝ պատկերվում են պատմական Հայաստանը ներկայացնող ավերակներն ու սգակիր հայուհին։ Առանձնահատկությունները եզրագորտիների գեղազարդման համակարգում են եւ գորգադաշտի հարդարման մանրակներում։*

Այս խմբին պատկանող գորգերի թվում մեծ հետաքրքրություն է ներկայացնում Հին Վեհարանում պահվող մի գորգ, որի պատկերագրման համակարգը բացառիկ հարուստ է եւ խորհրդանշական (պատկեր 16)։ ԺԹ. դ. վերջին քառորդում մետաքսաթելով գործված այդ գորգն աչքի է ընկնում կատարման բարձր որակով, արտակարգ նրբությամբ եւ մատնանշում է այն գործողների մասնագիտական անթերի ունակությունները։ Ակնհայտ է, որ գծանկարը հատուկ պատվերով պատրաստել են որակյալ գորգանկարիչները, եւ գործել են բարձրակարգ գորգագործներ։ Հնարավոր է, որ այն ստեղծվել է փոքրասիական հայաբնակ գորգագործական կենտրոնում՝ 1890-ական թվականներին հիմնված որբանոցներից մեկում։ Այդ առումով կարեւորում ենք «որբ ենք» բառերը, որոնք գործված են գորգադաշտի վերին մասում պատկերված երկու շեփորահար հրեշտակների բռնած ժապավենին։ Միեւնույն ժամանակ չի բացառվում նաեւ այդ բառերի կապ ունենալը գորգի գեղազարդման համակարգի թեմատիկ բովանդակության հետ։ Պատկերագրման թեման, ըստ էության, ունի կրոնածիսական ուղղվածություն, ներկայացնում է որոշակի

ավանդույթներ, որոնց հավերժությունն ու դրա հանդեպ հավատը շեշտում են կենաց ծառերն ու շեփորահար մունետիկները։ Այս նմուշն ունի առանձնակի պատմամշակութային նշանակություն եւ ունի հետագա մանրակրկիտ հետազոտությունների կարիք։

Հայոց գորգագործական մշակույթի պատկերագրական ավանդույթների հետազոտման առումով մեծ հետաքրքրություն է ներկայացնում նաեւ ԺՀ. դ. թվագրվող Թեմատիկ *խմբին պատկանող եւս մեկ գորգ։ Այն գեղազարդված է կանոնավոր շարքերով ներկայացված մարդկային ոճավորված պատկերների եւ նոճիանման ծառանախշերի կանոնավոր շարքերով։ Այս դեպքում ուշագրավ է մարդկային պատկերներից յուրաքանչյուրի գլխարկի դիմային մասում պատկերված խաչազարդը։ Պատկերների ոճավորման յուրահատուկ սկզբունքները, գունային երանգները, ինչպես նաեւ անգորական այծի բրդից մանված թելերի առկայությունը թույլ են տալիս այն վերագրելու Փոքր Ասիայի կենտրոնական մասերի՝ գորգագործական հնամենի ավանդույթներով հայտնի պատմական Փոքր Հայքին՝ մասնավորապես Սեբաստիա— Ակն—Արաբկիր—Տիվրիկ գորգագործական կենտրոններին։ Բայց հարկ է արձանագրել, որ դրա հետ միասին կա եւս մեկ հատկանիշ. լայն գոտու գեղազարդման հիմնական տարրերից մեկը՝* Կենաց ծառ *նախշի յուրահատուկ տարբերակը, բնորոշ էր պատմական Հայաստանի արեւելյան եւ հյուսիսարեւելյան, ինչպես նաեւ Ուրմիա լճի ավազանի գորգագործական կենտրոններին։ Մասնավորապես դա առկա է 1731 թվականին ստեղծված վերը հիշատակված* Գանձասար *գորգի գեղազարդման համակարգում։ Հավաքածուի վերոհիշյալ ու նման մյուս գորգերը ճանաչողական կարեւոր նշանակություն ունեն տարածաշրջանի գորգագործական մշակույթի պատմության ամբողջականացման հարցում։ Ի դեպ, այս գորգի կրկնօրինակը պահվում է Վարշավայի արքունական պալատի՝ «Թերեզա Սահակյան» հավաքածուում, եւ դա մեզ հնարավորություն է տալիս ենթադրելու, որ դրանք ստեղծվել են գորգագործական միեւնույն արհեստանոցում*[5]։

Հավաքածուում կան նաեւ այս խմբում ներառված Զինանիշային *տեսակին պատկանող գորգեր։ Դրանք կաթողիկոսական գորգերն են, որոնք գեղազարդման հիմնական տարրով՝ արծվապատկերով պայմանավորված՝ հիմնականում հայտնի են որպես* Կաթողիկոսական արծվա-

[5] *Տես* http://thenordar.com/zamok-v-varshave-s-kollekciey-kavkazskih-kovrov/։

գորգ։ *Դրանց թվում աչքի ընկնող նմուշ է Վազգեն Ա. կաթողիկոսի գորգը, որն ըստ հիշատակարանի՝ գործել են 1960 թվականին՝ ենթադրաբար Լիբանանում կամ Սիրիայում (պատկեր 18)։*

Կատարման բարձր որակով ու պատկերագրման առումով ուշագրավ նմուշ է նաեւ 1903 թվականին հայոց Մեծ դարձի 1600-ամյակի առթիվ գործված՝ Էջմիածնի Մայր տաճարի պատկերով մետաքսահյուս գորգը[6]։ Այս դեպքում առանձնահատուկ են գորգի եզրագոտիների գեղազարդման տարրերը, ընտրված մեղմ գուներանգները, որոնք բոլորն էլ համահունչ են կառույցի մանրակներին ու գորգադաշտի ընդհանուր նկարագրին։

Զ. ՈՒՇ ՎԻՇԱՊԱԳՈՐԳԵՐ

Վիշապագորգերի խմբում, ի շարս դասական վիշապագորգերի, մենք որպես առանձին ենթախումբ ներառել ենք նաեւ դրանց գեղազարդման ավանդույթները կրող ու ԺԹ.–Ի. դարերին վերաբերող վիշապագորգերը։ Պայմանականորեն դրանք տարբերակել ենք Ուշ վիշապագորգեր *անվանումով։ Այդ ենթախմբում ընդգրկված գորգերի բնորոշման հարցում առանցքային հորինվածքն առասպելական վիշապի ոճավորումներն են։ Դրանք աչքի են ընկնում պատկերագրման ձեւի բազմազանությամբ, որով էլ պայմանավորված է նաեւ* Ուշ վիշապագորգերի *տեսակների ու դրանց տարբերակների բազմազանությունը։ Մայր Աթոռում պահվող գորգերի այս ենթախմբում ընդգրկված* Ուշ վիշապագորգերի *տեսակները հիմնականում կրում են* Գուհար *դասական վիշապագորգի ավանդույթները, իսկ մյուսներն իրենց պատկերագրման հատկանիշներով առանձնահատուկ են։ Դրանք առավելապես աղերսվում են* Ուշ վիշապագորգերի Խնձորեսկ *տեսակին բնորոշ վիշապա-պատկերի ոճավորումների պատկերագրման սկզբունքներին։*

Գուհարյան ավանդույթները Մայր Աթոռի հավաքածուում ներկայացված են Սիսական *տեսակի վիշապագորգերի երկու նմուշով։ Երկուսն էլ աչքի են ընկնում որոշակի առանձնահատկություններով։ Այստեղ ներկայացվածը Մայր Աթոռի՝ նախկինում գոյություն ունեցած հավաքածուների նմուշներից է, բնորոշվում է վիշապի ոճավորումների եւ ընդհանրապես գեղազարդման բոլոր մանրակների գծանկարային՝ երկրաչափականաց-*

[6] *Մայր Աթոռի Հին Վեհարան, գ/հ 14։*

ված տեսքով (պատկեր 19)։ Այն վերաբերում է ԺԹ. դ. առաջին կեսին, գեղազարդման ավանդույթներով ներկայացնում է Սյունիքի հարավային գավառների գորգագործական կենտրոնները եւ կարեւոր սկզբնաղբյուր է այդ տարածաշրջանին բնորոշ վիշապագորգերի պատմության ուսումնասիրման եւ ընդհանուր նկարագրի առանձնահատկությունների բացահայտման համար։ Պատկերագրման այդ նույն սկզբունքներով, բայց ավելի աշխույժ ու ներդաշնակ գույներով է վերջին շրջանում ձեռք բերված նմուշը, որը զանգեզուրյան ավանդույթների հետ կրում է նաեւ Դիզակի գորգագործական կենտրոնների ազդեցությունը[7]։

Հավաքածուում ավելի մեծ թիվ են կազմում Խնձորեսկ *տեսակի եւ դրա ավանդույթները կրող մի քանի այլ տեսակներին պատկանող գորգերը։ Ընդ որում՝* Խնձորեսկ *տեսակը ներկայացված է միայն մեկ նմուշով։ Դրա գեղազարդման համակարգի հիմնական հորինվածքը դասական է նույն ավանդույթները կրող մյուս տեսակների գորգերի համար։ Այն բնորոշվում է բազմանիստ շրջանակում ներկայացված մի բարդ հորինվածքով, որի կենտրոնում՝ քառակուսի շրջանակում, ամփոփված կեռխաչ է կամ արեւի եւ հավերժության որեւէ մեկ այլ խորհրդանշան։ Դրա շուրջ բոլորը պատկերված են վիշապի ութ ոճավորումներ եւ քառակուսուց ծլարձակած, կյանքի ու բնության հավերժությունը խորհրդանշող կենաց ծառերով (պատկեր 20)։ Հավաքածուում պահվող այս նմուշը խնդրո առարկա տեսակի եւ ընդհանրապես* Ուշ վիշապագորգերի *գեղազարդման համակարգերից առանձնանում է լայն գոտու գեղազարդման հիմնական հորինվածքով՝ բազմաթերթ վարդակով, որն իր հերթին կարող է աղբյուր հանդիսանալ Արցախ–Սյունիքի գորգագործական կենտրոններին վերաբերող այս գորգի ծագման վայրի առավել որոշակիացման համար։*

Հավաքածուում համեմատաբար շատ են գեղազարդման այս նույն ավանդույթները ներկայացնող Գետաշեն *տեսակի գորգերը։ Այս դեպքում հիմնական հորինվածքը նույնպես ամփոփված է բազմանիստ շրջանակում։ Դրա կենտրոնում լինում է ծաղկաթերթերով երիզված քառակուսի գծայնացված վարդակ, շուրջը՝ ոճավորված ու բուսանախշային բնույթ ստացած ութ վիշապապատկեր (պատկեր 21)։ Այդօրինակ գորգերի գործման նշանավոր կենտրոններից մեկը Գետաշեն գյուղն էր, եւ այդ տեսակը տարբերակել ենք* Գետաշեն *անվանումով։ Մայր Աթոռում պահ-*

[7] *Տե՛ս Մայր Աթոռի գանձատուն-թանգարան, գ/հ 37։*

վող նմուշները վերաբերում են պատմական Հայաստանի արեւելյան ու հյուսիսարեւելյան գորգագործական կենտրոններին։ Դրանց մեծ մասը թվագրվում է ԺԸ. դարի վերջերով եւ ըստ էության նույնպես վերաբերում է Մայր Աթոռի՝ նախքան Հայաստանի խորհրդայնացումն ունեցած հավաքածուին։ Կարեւոր է, որ այստեղ պահվող նմուշները հիմնականում ուղեգորգեր են ու հատկանշական են նրանով, որ վերը ներկայացված հորինվածքից բացի՝ մեկընդմեջ պատկերված են նաեւ Ամարաս *տեսակի գորգերին բնորոշ բազմաթերթ խոշոր վարդակներ։ Ընդ որում՝ այս տեսակի գորգերի գեղազարդման այդ տարբերակը, մեր ունեցած տեղեկությունների հիման վրա, վերագրում ենք Կապանի գորգագործական կենտրոններին։ Խնդրո առարկա հավաքածուում եղած՝ ԺԸ. դ. վերջով եւ ԺԹ. դ. առաջին կեսով թվագրվող նմուշները հնարավորություն են տալիս եզրակացնելու, որ Կապանի գորգագործական կենտրոններում պահպանված այս տեսակին վերաբերող ավանդույթն ունի բավականին խոր ակունքներ։*

Խնձորեսկ *տեսակին բնորոշ ավանդույթների յուրահատուկ արտահայտություններն են ներկայացնում* Վայք *տեսակի* Ուշ վիշապագորգերը։ *Այս տեսակին է պատկանում հավաքածուի երկու գորգ։ Այստեղ ներկայացվածը դասական նմուշ է, աչքի է ընկնում կատարման բարձր որակով, հորինվածքների, գեղազարդման մանրակների ու գուներանգների կատարյալ ներդաշնակությամբ (պատկեր 23)։ Ունի նաեւ դժվար ընթեռնելի՝ հայատառ թվակիր հիշատակարան.* «1900 Թ. Հ. ՄՈՒՍԱՅԵԼԻԵԱՆՑ....»։ *Այստեղ վիշապի ոճավորումները նույնպես ութն են եւ բնորոշվում են պատկերագրման ինքնատիպությամբ ու ոճավորման առավել հնամենի ավանդույթների ներկայությամբ։ Դրանք բոլորն ամփոփված են մեկ ընդհանուր՝ բազմանիստ ուրվագծով շրջանակում ու ստեղծում են մեկ կուռ ամբողջություն։ Այս հորինվածքի կենտրոնում կյանքի եւ բնության հավերժության հնամենի ծիսապաշտամունքային պատկերացումը խորհրդանշում է կենտրոնում ներկայացված* Զարդ աշխարհի *հորինվածքը։ Մայր Աթոռում պահվող այս նմուշը Հայաստանի այլ թանգարանների նմուշներից առանձնանում է նաեւ գեղազարդման մանրակների՝ ոճավորված կենդանապատկերների ու քառակուսի զարդերի ու մանավանդ լայն գոտու պարունակած խորհրդաբանությամբ։ Վերջինս գեղազարդված է* Դաղդղան *(հմայական պահպանակ) զարդաշարով, որով գորգադաշտը, ըստ ժողովրդական հնամենի ծիսապաշտա-*

մունքային պատկերացումների, զերծ է մնում չար աչքից եւ ընդհանրապես որեւէ վտանգից։

Է. ԱՍՏՂԱԶԱՐԴԵՐՈՎ ԳՈՐԳԵՐ

Աստղազարդը հայոց զարդարվեստի առավել հնամենի եւ ավանդական տարրերից է ու հայտնի է բազմաթիվ տարբերակներով։ Այն որպես գորգի գեղազարդման համակարգի տարր հանդիպում է հայոց գորգագործական բոլոր կենտրոններում եւ բոլոր տեսակների գորգերում։ Այս խմբում ընդգրկված տեսակներն առանձնանում են նրանով, որ դրանց գեղազարդման համակարգում հիմնական տարրն աստղազարդն է, որն իր հերթին հանդես է գալիս առանձին տարբերակների տեսքով։ Դրանք տարբերվում են պատկերագրման ձեւերով, աստղաթեւերի քանակով, չափսերով եւ այլ հատկանիշներով։ Պատկերվում են վանդակներում կամ առանց դրա, կանոնավոր շարքերով եւ ընդգրկում են ողջ գորգադաշտը։ Սովորաբար լրացվում են բուսածաղկային նախշերով, ոճավորված կենդանապատկերներով՝ ընդհանրապես մանր հարդարանքով։ Աստղազարդի ամենավաղ արտահայտությունը հայոց գորգարվեստում ներկայացված է Պազիրիկ *գորգի գեղազարդման համակարգում, ուր այն համադրված է* Զարդ աշխարհի *նախշի հետ։ Այս հորինվածքով բնորոշվող գորգեր են պատկերված Վերածննդի նկարիչների՝ մասնավորապես Հանս Մեմլինգի, Հանս Հոլբայնի ու Վան Դեյկի կտավներում։*

Այս տեսակի գորգերը մասնագիտական միջավայրում հայտնի են Լեզգի, Ջեյվա, Ղազախ *եւ այլ անվանումներով։ Մեր տիպաբանության համակարգում այն տարբերակված է* Որոտան *անվանումով։ Ընդհանուր առմամբ՝ գորգերի այս տեսակը հայտնի էր պատմական Հայաստանի եւ ընդհանրապես Հարավային Կովկասի եւ Փոքր Ասիայի գորգագործական բոլոր կենտրոններում։ Հայոց գորգագործական կենտրոններից այն առավելապես բնորոշ էր Սիսականի՝ մասնավորապես Որոտան գետի ավազանին։ Այդ նկատի ունենալով՝ մենք գորգերի այդ տեսակը տարբերակել ենք* Որոտան *անվանումով։ Մայր Աթոռում պահվում է այս տեսակին պատկանող երեք նմուշ, որոնցից մեկի գեղազարդման համակարգում էլ այս հորինվածքները ներկայացված են բազմանիստ շրջանակում ամփոփված տեսքով (տե՛ս պատկեր 10)։ Այստեղ ներկայացվածն ուշագրավ է աստղազարդերի թեւերին եղած հավելվածներով, ինչպես նաեւ*

հիմնական հորինվածքի կենտրոնում ներկայացված բուսածաղկային նախշի պատկերագրումով (պատկեր 23)։ Դա վերաբերում է նաեւ լայն գոտու գեղազարդման համակարգի մատուցմանը։ Ըստ էության՝ այդտեղ դրսեւորված են ավանդական հորինվածքներն առանձին մանրակներով ու պատկերագրման իր մոտեցումներով լրացնելու՝ վարպետ գորգագործուհու ակնհայտ կարողությունները։

Ը. «ՀԱՅԳՈՐԳ» ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՄԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԳՈՐԾՎԱԾ ԳՈՐԳԵՐ

Մայր Աթոռի հավաքածուներում պահվում են նաեւ «Հայգորգ» արտադրական միավորման նկարիչների գծանկարներով գործված գորգեր, որոնցից շատերը կարեւոր ներդրում են հայոց գորգարվեստի հարստացման գործում։ Դրանք հիմնականում խորհրդային շրջանի հայ լավագույն գորգանկարիչ Հակոբ Քեշիշյանի ստեղծածներն են։ Դրանց գեղազարդման համակարգն ամբողջությամբ արտացոլում է հայոց գորգարվեստի ավանդույթների ու նկարչի մտահղացումների ներդաշնակ ու հարուստ նկարագիրը։ Նշենք, որ «Հայգորգ» արտադրական միավորումից ձեռք բերված գորգերը, որոնք ունեն նաեւ թվակիր հիշատակարաններ, մեծամասամբ ստեղծված են Վազգեն Ա. կաթողիկոսի պատվերով։ Դրանց էական մասը դասական վիշապագորգերի վերամշակումներ ու դրանց թեմաներով արված հեղինակային ստեղծագործություններ են եւ այդ առումով ավանդականի ու գեղազարդման ժամանակակից պատկերացումների ուշագրավ ու հաջողված նմուշներ են։ Այստեղ ներկայացված է դրանց թվին պատկանող լավագույն նմուշներից մեկը (պատկեր 24)։ Երեւան *անվանակոչված այդ գորգի հեղինակը՝ Հակոբ Քեշիշյանը, օգտագործելով դասական վիշապագորգերի՝ մասնավորապես ԺԷ. դարում գործված հանրահայտ* Գրաֆ *գորգի գեղազարդման համակարգում տեղ գտած առանձին հորինվածքները, ստեղծել է վիշապագորգերի նոր նմուշներ, որոնցով 1930–60-ական թվականների ընթացքում վերականգնել ու նոր հորինվածքներով հարստացրել է այդ խմբին պատկանող գորգերի գեղազարդման մանրակների ու գուներանգների նկարագիրը։*

Ըստ էության՝ այս խմբին վերաբերող գորգերը, լինելով հեղինակային ստեղծագործություններ, նաեւ պատմամշակութային նշանակության

արժեքներ եւ կարեւոր սկզբնաղբյուրներ են հայոց ժամանակակից գորգարվեստն ուսումնասիրողների համար։

Թ. ԿԱՐՊԵՏՆԵՐ

Մայր Աթոռի գործվածքի հավաքածուում կան նաեւ կարպետներ։ Դրանք գործված են տարբեր եղանակներով եւ ըստ այդմ էլ բաժանվում են մի քանի տեսակների։ Հիմնականը երկուսն են՝ Երկերես *ու մեկ երեսանի։ Առաջինները բնորոշվում են նրանով, որ երկու երեսներն էլ հավասարապես ներկայացնում են տվյալ կարպետի գեղազարդման համակարգը։ Կարպետների մյուս խումբը գործում են յուրահատուկ՝ այսպես կոչված* օղաճիտ, թեք օղաճիտ, շուլալ *եղանակների տարբերակներով։ Այս դեպքերում գործվածքի գեղազարդման համակարգը դիտվում է միայն մեկ երեսին, իսկ հակառակ երեսին դիտվում են միայն նախշերի դարձերեսային գծանկարներն ու գործող թելերի ծայրերը։* Թեք օղաճիտ *եղանակով գործված կարպետները հայտնի են* Սումախ *անվանումով։ Մենք դրանք հարմար ենք գտնում միավորել* խառն տեխնիկա *հասկացության մեջ այնքանով, որքանով որ դրանցից յուրաքանչյուրի դեպքում սովորաբար օգտագործված է նաեւ մեզար գործելու եղանակը։ Մայր Աթոռի հավաքածուում կան* Երկերես *ու* Սումախ *տեսակի կարպետներ, որոնք վերաբերում են պատմական Հայաստանի տարբեր կարպետագործական կենտրոնների եւ այս կամ այն չափով պատկերացում են տալիս հայոց մեջ ընդունված կարպետագործական ավանդույթների մասին։* Երկերես *կարպետների շարքում մեծ հետաքրքրություն է ներկայացնում Փոքր Հայքի կարպետագործական կենտրոններում ստեղծված կարպետը, որի գեղազարդման հիմնական տարրը շեղանկյունաձեւ ուրվագծով, սղոցատիպ եզրերով խոշոր զարդն է (պատկեր 25)։ Հավաքածուի ուշագրավ նմուշներից մեկն էլ վերաբերում է կարպետագործական մշակույթի դաղստանյան՝ մասնավորապես ավարա-կումիկական ավանդույթներին ու այդ տեսակետից էլ կարեւորություն է ներկայացնում հետազոտողների համար*[8]*։ Նշենք, որ հիշյալ կարպետագործական կենտրոնները ծայրահեղ սակավաթիվ նմուշներով են ներկայացված Հայաստանի թանգարաններում։ Ի դեպ՝ այդ նույն տարածաշրջանի Դերբենտի կարպետագործական կենտրոններին է վերաբերում նաեւ* Սումախ *տեսակի*

[8] *Անդ, գ/հ 51։*

երկու կարպետներից մեկը[9]։ Այդ տեսակի կարպետներից երկրորդը վերաբերում է Վարանդայի կարպետագործական կենտրոններին եւ աչքի է ընկնում կատարման ու գեղազարդման հիմնական հորինվածքների եւ մանրակների ներկայացման բարձր մակարդակով։

Մայր Աթոռում պահվող կարպետների հավաքածուում անհամեմատ շատ են տրանսիլվանյան կարպետները։ Դրանք գործել են Ռումինիայում 1940—50-ական թվականներին եւ Մայր Աթոռ են բերվել Վազգեն Ա. Վեհափառի գահակալման տարիներին։

Ժ. ՊԱՐՍԿԱԿԱՆ ԵՒ ԷԹՆԻԿ ԱՅԼ ՀԱՆՐՈՒՅԹՆԵՐԻՆ ՎԵՐԱԲԵՐՈՂ ԳՈՐԳԵՐ

Մայր Աթոռի թանգարաններում պահվող գորգերի թվում էական մաս են կազմում Պարսկաստանում գործված գորգերը։ Դրանք բնորոշվում են ինչպես կատարման տեխնիկա-տեխնոլոգիական, այնպես էլ գեղազարդման սկզբունքների հատկանիշներով։ Բուն պարսկական գորգերը ներկայացված են Սպահանի, Քաշանի, Մեշհեդի ու Թավրիզի գորգագործական կենտրոններին վերաբերող նմուշներով։ Դրանց կատարումը շատ ավելի նուրբ է, գեղազարդման համակարգում էլ գերակշռում են բուսածաղկային մանր հորինվածքներն ու նաեւ գունային երանգների բազմազանությունը։

Տեխնիկա-տեխնոլոգիական յուրահատուկ հատկանիշներով տարբերակվում են հյուսիսարեւմտյան Պարսկաստանի գորգագործական կենտրոններում գործվածները։ Դրանք ներկայացնում են Ուրմիա լճի ավազանի, Սոյուջ Բուլաղի, Համադանի, Լիլահանի եւ Բուրվար-Զհարմահալի գորգագործական կենտրոնների ավանդույթները, որոնք բնորոշվում են տեղական ակնհայտ հատկանիշներով։ Դրանք մասնավորապես վերաբերում են հանգույցի ձեւին, հենքի եւ միջնաթելի ոլորքին, գունային երանգներին ու նաեւ գեղազարդման մանրակներին։ Նշենք նաեւ, որ հյուսիսարեւմտյան Պարսկաստանի գորգագործական կենտրոններում ձեւավորված ավանդույթներում որոշակի ավանդ ունեն նաեւ հայերն ու քրդական ցեղերը։ Այդ ամենով էլ պայմանավորված է հավաքածուի նշանակությունը վերոհիշյալ գորգագործական կենտրոններին բնորոշ ավանդույթների ու տեսակների բացահայտման համար։ Որոշ գորգեր

[9] *Անդ, գ/հ 59։*

ընդհանրապես պարսկական գորգագործական մշակույթի լավագույն ավանդույթները ներկայացնող նմուշներ են։ Ստորեւ ներկայացվողները սույն հոդվածի ընձեռած հնարավորությունների սահմաններում թույլ են տալիս պատկերացում կազմելու ինչպես պարսկական գորգերի, այնպես էլ հավաքածուում եղած թուրքմենական, քրդական ու այլ հանրույթներին վերաբերող գորգերի մասին։ Այս տեսակետից առանձնահատուկ է Գանձատանը պահվող մի նմուշ, որը հավանաբար գործել են Քերմանի գորգագործական արհեստանոցներում (պատկեր 26)։ Այն գեղազարդված է պարսկական գորգարվեստին բնորոշ բուսածաղկային հորինվածքներով, որոնց ներդաշնակ գուներանգները վկայում են դրա հեղինակների բարձր ճաշակի ու բանիմացության մասին։ Գորգին առանձնահատուկ փայլ ու հմայք է հաղորդում հումքի հարուստ տեսականին. այդտեղ գեղազարդման առանձին մանրակների ընդգծման եւ առավել հստակ ներկայացման համար մետաքսաթելերի հետ օգտագործվել է նաեւ արծաթաթել։ Այդ ամենով էլ պայմանավորված է այս նմուշի կարեւորությունը Մայր Աթոռում պահվող գորգերի հավաքածուի մշակութաբանական նշանակության գնահատման հարցում։ Պարսկաստանի հնամենի գորգագործական կենտրոնների թվում առանձնակի տեղ ունի Սպահանը։ Այդ քաղաքում եւ մերձակա բնակավայրերում գոյություն ունեցած գորգագործական արհեստանոցներում ստեղծված գորգերն ավանդաբար աչքի են ընկել տեսակների բազմազանությամբ, կատարման բարձր որակով ու գուներանգային բարձր հատկանիշներով։ Սպահանի գորգագործական կենտրոններում ստեղծված գորգերի տեսակների թվում հանրահայտ են որսի թեմաներով գորգերը, որոնց վաղ նմուշները թվագրվում են ԻԶ.—ԻԷ. դարերով։ Խնդրո առարկա հավաքածուի պարսկական ծագումով գորգերի թվում պահվում է Ի. դ. սկզբներին վերաբերող մետաքսաթել խավով մի որսագորգ (պատկեր 27)։ Դրա գեղազարդման համակարգը միանգամայն համահունչ է նախորդ դարերում ստեղծված որսի թեման ներկայացնող գորգերի գեղազարդման ավանդույթներին։ Կատարված է տեխնիկա-տեխնոլոգիական բարձր մակարդակով, խավի համար օգտագործված է մետաքսաթել, գործված է պարսկական մեկուկես հանգույցներով։

Հավաքածուում մեկ նմուշով ներկայացված է պարսկական գորգագործական մշակույթի ավանդական կենտրոններից մեկը՝ Ճոշականը (պատկեր 28)։ Այս կենտրոնին վերաբերող գորգերից ընդհանրապես

քիչ են պահպանվել, եւ ԺԹ. դ. երկրորդ կեսին գործված՝ Մայր Աթոռում պահվողն այդ սակավաթիվ նմուշներից է։ Ճոշական տեսակին պատկանող գորգերը, ի տարբերություն պարսկական գորգարվեստի հիմնական ավանդույթներից մեկի՝ բուսածաղկային հորինվածքով գեղազարդված լինելուն, այս դեպքում ներդաշնակորեն լրացված են մանր ծաղկանախշերով կազմավորված երկրաչափական տարրերով։

Ծագումնաբանական առումով ուշագրավ է նաեւ նշանախշերի յուրահատուկ մատուցմամբ բնորոշվող մի գորգ, որն ունի պարսկերեն ընդարձակ թվակիր հիշատակարան։ Ըստ այդմ՝ այն գործել են 1905 թվականին եւ, մեր կարծիքով, կրում է պարսկական գորգագործական մշակույթի եւս մեկ նշանավոր կենտրոնի՝ Յեզդի ավանդույթները (պատկեր 29)։ Այն պատկանում է ուղեգորգային տեսակին, նեղ ու երկար է եւ կատարված է պարսկական գորգագործական մշակույթի լավագույն ավանդույթներով։ Բայց մենք այս նմուշն առաջին հերթին կարեւորում ենք դրա եզրերին՝ լայն գոտու վրա, գործված հիշատակարանով. մի եզրին՝ «Քեալբալայի Ղոլամ Ռեզաի կին Ֆաթիմեն նվիրում է Աբու Աբդուլլա իմամ Հուսեյնին», *մյուս եզրին՝* «Այս նվիրված գորգը գողացողը, վաճառողը կամ առնողը անիծյալ լինի»։ *Թե ինչ պայմաններում է այս գորգը հայտնվել Մայր Աթոռի հավաքածուում, հայտնի չէ, իսկ գրությունը կարդացվել է 2008–2009 թվականներին, երբ կազմվում էին գորգերի գիտական անձնագրերը, ու այդ առիթով թարգմանվեց պատմական նշանակություն ունեցող այս հիշատակարանը։ Ավելացնենք, որ այն գործված է պարսկական կամ մեկուկես հանգույցներով եւ ունի բավականաչափ բարձր խտություն (մեկ քառ. դեցիմետրում՝ 75 x 82 հանգույց)։*

Այս խմբում բավականաչափ շատ են պարտեզային թեմաներով գորգերը։ Դրանք բնորոշվում են բուսածաղկային, մարդկային ու կենդանական պատկերների համադրությամբ ձեւավորված գեղազարդման համակարգերով եւ ըստ էության ներկայացնում են Խոսրով Անուշիրվան արքային վերագրվող Տարվա չորս եղանակները *գորգի գեղազարդման ու բովանդակային ավանդույթների հետագա պատկերագրումների տարբերակները։ Այս առումով կարեւորում ենք ուղղանկյուն շրջանակներում ամփոփված ծառանախշերով բնորոշվող եւ մասնագիտական շրջաններում քրդական բախտիար ցեղի անունով* Բախտիար *անվանակոչված գորգերը։ Դրանց թվում առանձնահատուկ է ԺԸ. դ. վերջին եւ*

ԺԹ. դ. սկզբին վերաբերող մետաքսաթելով գործված գորգը[10]։ Այն ունի բավականին մեծ չափսեր, աչքի է ընկնում գուներանգների բացառիկ հարստությամբ ու ներդաշնակությամբ, գործված է բարձր մակարդակով, մեկուկես հանգույցով եւ բարձր խտության (90 x 80 հանգույց՝ մեկ քառ. դեցիմետրում)։

Պարսկական գորգարվեստին վերաբերող բարձրակարգ նմուշների թվում առանձնակի տեղ ունեն նաեւ Թավրիզի, Քերմանի ու Քաշանի գորգագործական կենտրոններում ստեղծված ԺԹ. դ. երկրորդ կեսին վերաբերող եւս մի քանի գորգեր[11]։ Այս առումով էլ առանձնահատուկ է Քերմանի գորգագործական կենտրոններում ստեղծված Պարտեզային *տեսակին պատկանող գորգը (պատկեր 30)։ Այս գորգի հենքը բամբակաթելից է, խավ թելն ու միջնաթելը՝ մետաքսից։ Գեղազարդման որոշ տարրեր լրացված են մետաղաթելով։ Անթերի կատարված նմուշ է, ներկայացնում է դրախտային այգուց մի տեսարան՝ հեքիաթային թռչնապատկերներով հանդերձ։ Այս դեպքում եւս գուներանգները ներդաշնակ են ու թեմային համահունչ, գործված է տեխնիկական բարձր մակարդակով, մեկուկես հանգույցով եւ ունի շատ բարձր խտություն (110 x 100 հանգույց՝ մեկ քառ. դեցիմետրում)։*

Ինչպես տեսնում ենք, Մայր Աթոռի թանգարաններում պահվող պարսկական գորգերը բավական կատարյալ են ու ներկայացնում են պարսկական(իրանական) գորգարվեստի լավագույն ավանդույթները։

Հավաքածուում կան նաեւ թուրքմենական եւ իսլամ դավանող այլ հանրույթներին վերաբերող մի քանի գորգեր, որոնք, ըստ էության, չեն ներկայացնում դրանց բնորոշ լավագույն ավանդույթները։

Այսպիսով՝ Մայր Աթոռի թանգարաններում պահվող գորգերի հավաքածուն ընդհանուր առմամբ բնորոշվում է տեսակների բազմազանությամբ, որոնք հնարավորություն են տալիս ընդհանուր պատկերացում կազմելու հայոց, ինչպես նաեւ առաջավորասիական մի ամբողջ շարք գորգագործական կենտրոններում արմատավորված ավանդույթների, գեղազարդման ու տեխնոլոգիական առանձնահատկությունների մասին։ Միաժամանակ, նկատի ունենալով Մայր Աթոռում պահվող գորգերի հիման վրա հայոց գորգերի թանգարան հիմնելու հեռանկարը, հարկ

---

[10] *Անդ, գ/հ 8*

[11] *Անդ, գ/հ 25, 28։*

է, որ այն համալրվի հայոց գորգագործական մշակույթը ներկայացնող գորգերի մի շարք տեսակներին պատկանող նմուշներով, որոնք առայժմ չկան հավաքածուում։

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Մայր Աթոռի թանգարան, գորգ, կարպետ, պարսկական գորգ, աստղազարդ գորգ, ուշ վիշապագորգ:

РЕЗЮМЕ

Ковер традиционно широко использовался в религиозных обрядах и во внутреннем убранстве церкви. Для удовлетворения этих и других потребностей крупные монастырские комплексы использовали сотканные в собственных мастерских или полученные в дар ковры. На их основе со временем в крупных монастырских комплексах, в том числе в кафедральном соборе Эчмиадзина, сформировались коллекции ковров. Но в силу крайне неблагоприятных геополитических условий эти коллекции регулярно подвергались разграблению. Нынешняя коллекция в основном состоит из ковров, полученных в дар от репатриантов, возвращавшихся на родину в 1940-ые годы. Заметное число составляют ковры приобретенные от производственного объединения «Айгорг» и у отдельных граждан. В коллекции также сохранилось около полутора десятка ковров из досоветской коллекции Первопрестольного монастыря. Здесь в основном представлены центры ковроделия Арцаха, Сюника, восточных провинции Васпуракана, а также бассейна озера Урмия и др. Довольно много ковров дошло из ковроткацких центров армянских областей Малой Азии и колоний. В музеях Эчмиадзина хранятся также персидские, курдские и туркменские ковры. Типологический аспект коллекций включает ковры, характеризующиеся крупными растительными, геометрическими, звездчатым композициями, фигурами стилизованных драконов, которые в целом дают возможность составить определенное представление о ковроткацкой культуре армян и соседних народов.

11. Բարգուշատ» (հատված), *Շուշի*, XIX *դ. կես, բուրդ, բամբակ, 408* x *220 սմ (գ/հ 5, Վեհարան)։*

12. «Կենաց ծառ», *Բուրվար-Փերիա, 1910–20-ական թթ., բուրդ. (գ/հ 23, Վեհարան)։*

13. «Կենաց ծառ», *Հարավ-արեւելյան Կովկաս՝ Ղուբա-Դերբենտ, 1920-ական թթ., բուրդ, բամբակ, 149 x 119 սմ (գ/հ 9, Վեհարան):*

14. «Ամարաս», *Արցախ՝ Դիզակ-Վարանդա,* XVIII—XIX *դ. սկ., բուրդ, բամբակ, 574 x 196 (գ/հ 12,Գանձատուն):*

15. «Աղբակ» (տարբերակ), *Ուրմիա լճի ավազան՝ Խոյ-Սալմաստ,* XIX *դ. առ. կես, բուրդ, բամբակ, 830 x 280 (գ/հ 60, Գանձատուն):*

16. «Թեմատիկ-պատկերային», *Կեսարիա—Սեբաստիա,* XIX *դ. երկ. կես, մետաքս 189 x 130 (գ/հ 6, Հին Վեհարան):*

17. «Պատկերային», *Փոքր Հայք՝*
Սեբաստիա—Ակն—Տիվրիկ, XVIII *դ.*
(գ/հ 49, Գանձատուն):

18. «Զինանիշանային»,
Սիրիա—Լիբանան, 1960 թ.,
(գ/հ 43, Գանձատուն):

19. «Սիսական»,
Զանգեզուր—Բարգուշատ, XIX *դ.*
երկրորդ կես, բուրդ, 205 x *117 սմ*
(գ/հ 48, Գանձատուն):

20. «Խնձորեսկ» տիպի ուշ
վիշապագորգերի հիմնական հորինվածքը

22. «Վայք», *Սիսական, 1900թ., բուրդ, 237 x 107 (գ/հ 30, Գանձատուն):*

21. «Գետաշեն» հատված՝ հիմնական հորինվածքը:

24. Գորգ «Երեւան», *Երեւան, 1956 թ., բուրդ, բամբակ, 400 x 280, հեղինակ՝ Հակոբ Քեշիշյան (գ/հ 23, Գանձատուն):*

23. «Ոռոտան», *Արցախ, XX դ. սկ., բուրդ, 248 x 126 սմ (գ/հ Գանձատուն):*

25. Կարպետ,
Կեսարիա—Սեբաստիա, 1910-ական թթ., բուրդ, 440 x 195 սմ (գ/հ 52, Գանձատուն):

26. «Ծաղկավոր», *Իրան՝ Սպահան,*
XIX դ. վերջ—XX դ. սկիզբ, *342 x 244 սմ (գ/հ 44, Գանձատուն):*

27. «Պատկերային», *Իրան՝ Սպահան,* XX դ. սկ., *բուրդ, բամբակ, մետաքս, 330 x 222 սմ (գ/հ 45ա, Գանձատուն):*

28. «Ճոշական», *կենտրոնական Իրան՝ Ճոշական,* XIX դ. երկ. *կես, բուրդ, բամբակ, 410 x 317 սմ (գ/հ 22., Գանձատուն):*

30. «Պարտեզային», *Քերման, XIX դ. վերջ, մետաքս, մետաղաթել, 218 x 104 սմ (գ/հ 28, Գանձատուն)*

29. «Նշանախշով», *Թավրիզ, 1905 թ., բուրդ, բամբակ, 252 x 56 սմ (գ/հ 31, Գանձատուն):*

SUMMARY

Traditionally, carpets were widely used in religious ceremonies and in the interior decoration of churches. To meet these and other similar needs, large monastic complexes and churches with high reputation used carpets woven in their own workshops or received as gifts. Over time, carpet collections were formed on their basis in large monastic complexes, including the Cathedral of Holy Etchmiadzin. However, due to extremely unfavorable geopolitical conditions these collections were regularly looted or were donated to the rulers of the given regions for their safety. The current collection consists mainly of carpets donated by Diaspora Armenians, who have returned to their homeland since the 1940s, and by various Diaspora organizations. A noticeable number are carpets acquired from the "Haygorg" Production Association and from individual citizens. The collection also preserves about a dozen of carpets from the pre-Soviet collection of Yerevan. Carpet-making centers of historical eastern provinces of Armenia - Artsakh, Syunik, Vaspurakan, as well as the basin of Lake Urmia, are mainly represented here. There are also quite a lot of carpets related to Armenian settlements in Asia Minor. Carpets belonging to Persian and a number of other communities form a separate group. Typologically, the collection includes carpets characterized by large vegetal, geometric, and stellate compositions, stylized dragon figures, which give a certain idea of the carpet making culture of the Armenians and neighboring nations.